ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 մարտի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

33
(2883)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ ԵԿԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ Է ԼՈՒԾՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հստակ որոշում ունի՝ բռնի տեղահանված արցախցիներին փոխանցված միջազգային գումարների հետ կապված:

Հիշեցնենք, որ 2023 թվականին նախատեսված էր Արցախին փոխանցել 144 մլրդ ՀՀ դրամ: Այս մասին ԱԺ-ում 2023 թ. պետական բյուջեի քննարկման ժամանակ հայտարարել էր էկոնոմիկայի նախկին նախարար Տիգրան Խաչատրյանը: Եթե այս թվին՝ 144 մլդ դրամին, գումարենք նաեւ Ճապոնիայի կողմից արցախահայերին տրամադրված 2 միլոն դոլարը, որը համարժեք է 820 մլն դրամի, ավելացնենք ԱՄՆ-ի կողմից տրամադրված 11 մլն դոլարը, որը համարժեք է 4 մլդ 716 մլն դրամի, նաեւ Եվրահանձնաժողովի կողմից փոխանցված 10.4 մլն եվրոյին համարժեք 4 մլդ 506 մլն դրամը, Լատվիայի կողմից հատկացված 350 հազար եվրոյին համարժեք 151 մլն դրամը, Շվեյցարիայի կողմից տրամադրված 1,5 մլն ֆրանկին համարժեք 675 մլն դրամը, Կանադայի կողմից տրամադրված 2,5 մլն դոլարին համարժեք 1 մլդ 25 մլն դրամը, կստացվի 155 մլդ 893 մլն դրամ:

Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանը որոշել է այս գումարները այլ կերպ ծախսել: Նա սահմանել է թեորեմ, ըստ որի՝ չեն առանձնացվելու արցախցիները, իսկ գումարները ծախսվելու են ոչ թե հենց արցախցիների, այլեւ ՀՀ բոլոր անտուն քաղաքացիների համար:

Սրանից կարելի է ենթադրել, որ Նիկոլ Փաշինյանը փորձում է արտասահմանից՝ տեղահանված արցախահայերի կարիքների համար եկած գումարներով բարելավել Հայաստանի սոցիալ- տնտեսական վիճակը եւ վերագրել իրեն այդ գործողությունները: Այս քայլը հետագայում կօգնի նրան գլուխ գովել նախընտրական քարոզարշավներում՝ այդ ամենը վերագրելով իրեն:

Հիշեցնենք, որ նախագիծ է շրջանառվում, ըստ որի՝ յուրաքանչյուր տեղահանվածի պլանավորում են փոխանցել 3 մլն ՀՀ դրամ, որպեսզի բնակարան գնեն: Պարզ է, որ նրանք այդ գումարներով միայն հեռավոր սահմանամերձ բնակավայրերում կկարողանան տուն գնել, քանի որ պահանջարկ չկա այդ հատվածներում:

Այսօր Երեւանի ավագանիում թեժ է լինելու: Ավագանին քննարկելու եւ արդեն վերջնական հաստատելու է տրանսպորտի ուղեվարձի թանկացման աղմկահարույց նախագիծը: Չնայած հանրային դժգոհություններից հետո քաղաքային իշխանությունները տպավորություն ստեղծեցին, թե մտադիր են ընդառաջ գնալ եւ որոշակի զիջումներ կատարել, բայց, ահա, այսօր երկար չարչրկված նախագիծը կդրվի ավագանու հաստատմանը: Տրանսպորտի ուղեվարձի թանկացումներն ուժի մեջ կմտնեն այս տարվա սեպտեմբերի 1-ից: Իսկ որքա՞ն կթանկանա տրանսպորտի ուղեվարձը, որքա՞ն քաղաքացին պետք է վճարի տրանսպորտով երթեւեկելու համար, բարդ մաթեմատիկա է: Այսպիսով, ըստ նախագծի՝ առաջարկվում է տարեկան կտրվածքով երթեւեկության համար տրանսպորտի ուղեվարձը դարձնել փաթեթային համակարգով 90.000 դրամ՝ քարտային տարբերակով, իսկ եթե ձեռք եք բերում էլեկտրոնային կրիչ, ապա՝ 88.000 դրամ: 1 ամսվա համար տրանսպորտի ուղեվարձի փաթեթը կդառնա 9000 դրամ, 1 օրվա համար 8 անգամ երթեւեկելը կարժենա 900 դրամ, իսկ 7 օրվա համար առավելագույնը 30 անգամ տրանսպորտով երթեւեկելը՝5000 դրամ, 90 րոպե երթեւեկելը կարժենա 300 դրամ: 30 օրում 10 ուղեւորության համար քաղաքացիները կվճարեն 2200 դրամ: Նշենք, որ եթե քվորում լինի, եւ նիստը կայանա, ապա քաղաքային իշխանությունները առանց խոչընդոտի կարող են ընդունել քաղաքացիների գրպանին հարվածող հերթական նախագիծը, որով 150-300 դրամ կդառնա ուղեվարձը: Իսկ ինչ են պատրաստվում անել Երեւանի ավագանու ընդդիմադիր խմբակցությունները: Ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար Իզաբելլա Աբգարյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց, որ մասնակցելու են նիստին. «Նիստին գնալու ենք, ելույթներ էլ ենք ունենալու ու ամեն ինչ անելու ենք, որ տրանսպորտի թանկացման իրենց հիմար նախագիծը չընդունվի»: «Հանրային ձայն»-ն էլ իր հերթին մտադիր է գաղտնի պահել իր որոշման մասին. մեզ խմբակցությունից հայտնեցին, որ որոշում ունեն, բայց չեն ցանկանում հրապարակել: Հաշվի առնելով նրանց գործելաոճը՝ենթադրվում է, որ կրկին վերջին պահին կգնան եւ կապահովեն քվորում ՔՊ-ի համար, որպեսզի իշխանությունները դակեն իրենց ցանկացած նախագիծը: Դե իսկ «Մայր Հայաստան»-ից մեզ ասացին, որ եթե մյուս խմբակցությունները գնան ու քվորում ապահովեն, ապա իրենք էլ կմասնակցեն ու ելույթներ կունենան՝ քաղաքացիներին ներկայացնելով այս թանկացումների հետեւանքները: Նշենք, որ ավագանու նիստից առաջ քաղաքապետարանի դիմաց նաեւ ակցիա է նախատեսած՝ ընդդեմ տրանսպորտի ուղեվարձի թանկացման: Առավոտ 9:00-ից կսկսվեն բողոքի գործողությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանին կրկին հրավիրել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե եւ հարցաքննել: Նախաքննական մարմինը Վարդազարյանից պահանջել է իր եւ Գագիկ Ջհանգիրյանի հետ զրույցի ամբողջական տարբերակը, սակայն Ռուբեն Վարդազարյանը կրկին հրաժարվել է այն տրամադրել: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ Հակակոռուպցիոն կոմիտեն խուզարկության էր մտել ԲԴԽ նախկին նախագահ Վարդազարյանի տուն՝ փնտրելով ամբողջական ձայնագրությունը, որտեղ ուշագրավ հատվածներ կան: Ինչո՞ւ են հիմա հիշել իրավապահները ձայնագրության ամբողջական տարբերակի մասին, հատկապես երբ Հակակոռուպցիոն կոմիտեի թեթեւ ձեռքով այդ գործը կարճվել էր, ու միայն Վարդազարյանի համառության շնորհիվ է վերաբացվել: Մինչ այդ փաստացի անգործունակ եղած Հակակոռուպցիոն կոմիտեն նոր թիրախներ է փնտրում: Հիշեցնենք, որ 2022թ. հունիսի 20-ին Ռուբեն Վարդազարյանը հրավիրված ասուլիսում աղմկահարույց ձայնագրություն էր հրապարակել, որով հիմնավորվում էր, որ ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանը փորձել է պարտադրել Վարդազարյանին հրաժարական տալ ԲԴԽ նախագահի պաշտոնից:



Առողջապահական համակարգի հերթական «բարեփոխումը» կաթվածահար է արել Հայաստանի Հանրապետության առողջապահական ոլորտը: «Արմեդ» համակարգի միջոցով նախարարությունը ներդրել է մի աշխատակարգ, որով 470 անուն դեղ այսուհետ կտրամադրվի միայն էլեկտրոնային դեղատոմսով: «Արմեդ» էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատորը տարածել է հայտարարություն, ըստ որի՝ էլեկտրոնային դեղատոմսերին միացված է 705 դեղատուն՝ 1200 մասնաճյուղերով: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում դեղատան տնօրենները փաստում են, որ «Արմեդ» համակարգին միանալու համար կան նախատեսվող վճարումներ, քանի որ համակարգի սպասարկման ծառայությունները վճարովի են բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար: Բացի այդ, դեղատներին անհրաժեշտ են լինելու հավելյալ աշխատակիցներ, համակարգիչներ, որպեսզի կատարեն այդ աշխատանքը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ առողջապահության նախարարի ներկայացրած թվերը մեծ ռիսկ են ներկայացնում: Անահիտ Ավանեսյանը հայտարարեց, որ 40 հազար դեղատոմս արդեն դուրս է գրվել, բայց հարց է՝ լա՞վ է 40 հազարը, թե՞ վատ: «Առողջության իրավունք» ՀԿ-ի տնօրեն Անուշ Պողոսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց, որ սա լավ արդյունք չէ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԵՎ ՍՏՎԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼ»

Անցած հինգշաբթի Երեւանի ավագանու ֆինանսավարկային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովն առաջին փուլով ընդունել է տրանսպորտի ուղեվարձի թանկացման նախագիծը:

ArmLur.am-ը զրուցել է «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյանի հետ:

-Պարոն Մանուկյան, հայտարարել էիք, որ իշխանությունները վերջին պահին են տրանսպորտի թանկացման նախագիծն օրակարգ բերել: Դուք ներկա եք եղել նիստին, ի՞նչ կատարվեց, ինչպե՞ս իշխանությունները կարողացան ընդունել այն:

- Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել գաղտագողի, այսինքն՝ նիստը հրավիրված է եղել, բայց հարցն օրակարգ մտցրել են նիստը սկսելուց 1 ժամ առաջ՝ հրատապի տակ. թե որն էր հրատապությունն այս հարցի, չկարողացան ասել:

«Հանրային ձայն»-ի ներկայացուցիչները դուրս եկան ու չմասնակցեցին հանձնաժողովի նիստին, «Ազգային առաջընթաց» խմբակցության ներկայացուցիչներից միայն Պեդրո Զարուկյանն էր ներկա, իսկ մերոնցից հանձնաժողովի 3 անդամներն էլ ներկա էին:

Երբ ՔՊ-ի հետ ընդհանուր հայտարարի չեկանք, ես թվեր հրապարակելով՝ նրանց ասացի, որ վատ կառավարիչ են, ու լքեցինք հանձնաժողովի դահլիճը: Իրենք իրենցով անցկացրին նախագիծը, հարցը ներառվել է երեքշաբթի օրվա նիստի օրակարգ:

-Պարոն Մանուկյան, կխնդրեմ ներկայացնել, թե տրանսպորտի միասնական համակարգի գործարկվելուց հետո ինչ փոփոխություններ են լինելու, որքան է թանկանալու տրանսպորտի գինը:

-Իմ կարծիքով՝ միջինը քաղաքացու համար տրանսպորտը 200 դրամ է արժենալու:

Ուշագրավ է, որ իշխանությունները նույնիսկ ֆինանսական հիմնավորում չունեին նախագծի համար: Ինձ համար ընդունելի չէր, որ քաղաքապետարանի պաշտոնյաները, կոնկրետ՝ Սուրեն Գրիգորյանը, չկարողացավ թիվ հնչեցնել, թե որքան գումար է հավաքագրում «Երեւան ավտոբուս» ՓԲԸ-ն: Իմ հարցին, թե «Երեւան ավտոբուս» ՓԲԸ-ին որքան սուբսիդիա է տրամադրվում, պարզվեց՝ 4 մլրդ 32 մլն դրամ, այսինքն՝ իրենց պնդումը, թե 7 մլրդ է, սուտ էր դա: Քաղաքացիների համար պարզ լինելու համար, թե ավտոբուսը օգուտով է աշխատում, թե վնասով, բացատրեմ. սուբսիդիա՝ գումարած իրենց հավաքած գումարը. այսպես է ձեւավորվում նրա գումարը:

Երբ իրենց հարցնում եմ՝ օրական որքան է հավաքագրում, ասում են՝ ստվերը մեծ է, չենք կարող ասել, հարցնում եմ՝ որքան, ասում են՝ ստվերը 50 տոկոսից ավել է: Այսինքն՝ եթե մենք նույնիսկ հիմք ընդունենք իրենց ասած 550.000 թիվը եւ ընդունենք, որ կեսից մի փոքր ավել են կարողանում հավաքագրել, ապա 250.000 հազար իրենց մոտ ստվերն է ստացվում: Այս իշխանությունները չեն կարողանում կառավարել ու ստվերը վերացնել. եթե ստվերը վերացնում ես, ուրեմն սուբսիդիայի կարիք չի լինում ու չի թանկանում:

-Հայտարարել էիք, որ եթե տրանսպորտի գինը թանկանա, դուրս եք գալու փողոց ակցիաների ու թույլ չեք տալու դա: Ի՞նչ եք պատրաստվում անել:

-Ես այսպես եմ պատկերացնում. քանի որ հանրությունը դեռ առարկայական չի պատկերացնում, որ թանկացել է, մեր հանրության մոտ այսպես է՝ երբ առաջին անգամ վճարում է, նոր գիտակցում է, որ թանկ է վճարում: Պետք է լինի հանրային ճնշում, քաղաքացին պետք է պաշտպանի իր շահերը, եւ ընդդիմությունը պետք է լինի քաղաքացու կողքը, այլ ոչ թե ընդդիմությունը խնդրի, որ քաղաքացին լինի իր կողքը: Ժողովուրդը պետք է իր շահերը պաշտպանի, մենք նրանց կողքին ենք, պատրաստ ենք ծառայել նրանց հրամանին:

-Նախագիծը մարտի 12-ի ավագանու նիստում կդրվի վերջնական քննարկման. մասնակցելու՞ եք նիստին:

-Ես վստահ եմ, որ մեր խմբակցությունը օրինագծի քվեարկությունը կբոյկոտի. բոյկոտը միակ գործիքակազմն է, քանի որ դեմ քվեարկելը դա նույնն է, ինչ կողմ քվեարկելը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՐԴԵՆ ՀԱՄԱՁԱՅՆԵԼ Է

«Սահմանազատման գործընթացի շրջանակներում կլուծվի նաեւ Ադրբեջանի 4 էքսկլավային գյուղերի (Յուհարի Ասիփարա, Սոֆուլու, Բարխուդարլի եւ Քյարքի) ազատման հարցը, որոնք օկուպացրել է Հայաստանը»,- նշում են ադրբեջանական ԶԼՄ-ները: Քաղաքագետ Ստեփան Դանիելյանը ArmLur.am-ի հետ զրույցում նկատեց, որ վարչապետը արդեն համաձայնել է այդ գյուղերը հանձնել: Ըստ Դանիելյանի՝ Փաշինյանի վերջին ամիսների ելույթները վկայում են հենց այդ մասին. «Որքանով ես եմ հասկանում, գործող վարչապետը արդեն համաձայնել է այդ գյուղերը հանձնել. վերջին ամիսների ելույթները լսե՛ք, դրա մասին են, եւ նաեւ այնտեղ՝ սահմանագծում գտնվող զինվորների տրված հրահանգներից կարելի է ասել, որ իրենք արդեն համաձայնել են եւ դեռ չգիտեն՝ ինչպես ներկայացնեն Հայաստանի հասարակությանը»,- ասաց քաղաքագետը: Քաղաքագետը վստահ է, որ Հայաստանը պաշտպանելու համար պետք է ներկա կառավարությունը հրաժարական տա, պետք է նորմալ քաղաքական ընդդիմություն ձեւավորվի, ձեւավորվի արտաքին քաղաքականություն, հանրության հոգեբանությունը փոխվի, եւ այդ դեպքում ոչ միայն 4 գյուղը չենք կորցնի, այլ նաեւ ապագայում գյուղեր, տարածքներ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿՐԿԻՆ ԽԱԲԵԼ Է

Ո՛չ Հայէլեկտրոյի, ո՛չ էլ ադամանդի գործարանը չկառուցվեց. Նիկոլ Փաշինյանը խաբել է: 2018 թվականի նոյեմբերի 27-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում կայացած նախընտրական քարոզարշավի շրջանակներում Նիկոլ Փաշինյանը հրապարակավ խոստացավ. ««Հայէլեկտրո» գործարանի տարածքը հայ ներդրողն արդեն վերցրել է եւ մտադիր է այնտեղ մեքենաշինական ոլորտի գործարան ստեղծել, որը ենթադրում է մի քանի հարյուր աշխատատեղ ստեղծել»: Սակայն «Հայէլեկտրո» գործարանի տարածքում Նիկոլ Փաշինյանի խոստացած գործարանը, այն էլ՝ մի քանի հարյուր աշխատատեղով, չի բացվել: Նույն քարոզարշավի շրջանակներում նա խոստացավ. «Երեկ մի ներդրող մոտեցավ եւ ինձ ասաց, որ Կոտայքի մարզում ադամանդագործության ոլորտում ադամանդի մշակման մեծ գործարան ունի ու հիմա մեծ ներդրում է անում, եւ 2 հազարի չափ նոր աշխատատեղ է ստեղծվելու»: Իրականում Կոտայքի մարզում 2000-ի չափ նոր աշխատատեղեր ունեցող ադամանդի գործարան 2018 թվականից հետո չի բացվել: Այսինքն՝ Նիկոլ Փաշինյանը խաբել է:

ՀԱՂԹԵԼ Է

«ՁՐԻ» ՀԱՆԳԻՍՏ՝ ՄԻԼԱՆՈՒՄ

Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը, բաղաքացիներին դատարան հասցնելով եւ դատարանում հաղթանակի հասնելով, իր հանգիստն է անվճար անցկացնում Միլանում:

Մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը ֆեյսբուքյան իր էջում գրառում է կատարել, որտեղ գրված էր. «Միլանի իմ հանգիստը հովանավորվում էր ... մի անձի կողմից, ով վիրավորել էր ինձ ու դատարանի որոշմամբ վիրավորանքի համար փոխհատուցել:

Հետեւաբար մի՛ վիրավորեք մարդկանց, թե չէ հետո կարող եք անակնկալի գալ, հետո էլ՝ տխրել»: Կից տեղադրել է նկար, որտեղ երեւում է թե ինչպես նյարդավիրաբույժ Մարինա Խաչատրյանը հրապարակավ ներեղություն է խնդրում նախարարի տեղակալից:

ArmLur.am-ը Դատական տեղեկատվական համակարգից տեղեկացավ, թե Լենա Նանուշյանը ում է դատի տվել, եւ դատարանում 1 միլիոն դրամ փոխատուցում ստանալով՝ ինչպես է «ձրի» հանգիստն անցկացնում Միլանում, եւ մի բան էլ հրապարակային այդ մասին գրառում կատարում:

Հիշեցնենք, որ Երեւանի քաղաքապետարանի ավագանու անդամ Մարինա Խաչատրյանը, որը հայտնի է քաղաքապետարանի «կոյուղաջրերի» միջադեպից, 2021 թվականին երեք հրապարակման միջոցով վիրավորական արտահայտություններ է գրել փոխնախարար Լենա Նանուշյանի հասցեին:

Նանուշյանը, ֆեյսբուքյան իր էջում անդրադառնալով դատական վճռին, գրել է. «Կովիդ վակցինացիայի ընթացքում Առողջապահության նախարարության ղեկավար անձնակազմի հանդեպ հնչած վիրավորանքների պակաս չենք ունեցել: Ով տեղից ելնում, որոշում էր անձնական վիրավորանք հասցնել, այնինչ գիշեր-ցերեկ անում էինք մեր գործը՝ մարդկանց կյանքեր փրկելու համար: Այս դատավճիռը, մանավանդ՝ 1 մլն փոխհատուցումը, հուսամ կսթափեցնի որոշ մարդկանց, որոնք մտածում էին, թե իրենց կարելի է մարդկանց պատվի ու արժանապատվության հետ խաղալ՝ անպատիժ մնալով: Շնորհակալություն փաստաբանիս ու իր թիմին արդարություն գտնելու ճանապարհին օգնելու համար»:

Ք. Մ.

ՆՊԱՏԱԿԸ ԲԱՆԱԿՑԵԼԸ ՉԷ

«Սահմանազատման գործընթացի շրջանակներում կլուծվի նաեւ Ադրբեջանի 4 էքսկլավային գյուղերի (Յուհարի Ասիփարա, Սոֆուլու, Բարխուդարլի եւ Քյարքի) ազատման հարցը, որոնք օկուպացրել է Հայաստանը»,- նշում են ադրբեջանական ՋԼՄ-ները:

ArmLur.am-ը զրուցեց քարտեզագետ Ռուբեն Գալչյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչ գյուղերի մասին է խոսքը, եւ ինչ կարելի է սպասել այս հայտարարությունից հետո:

«Խնդիրն այն է, որ իրենց ասաց 4 գյուղերը անկլավների մեջ են, որը Ադրբեջանին է տրվել ապօրինի կերպով. 4 գյուղերը դրանք են: Սահմանը անցնում է գյուղերի կողքով կամ գյուղի միջով, այդտեղի որոշ մասերը մեր հսկողության տակ են, որոշը՝ իրենց, իսկ ամենակարեւորն այն է, որ Ադրբեջանը չի ասում այն, որ 2021 թվականի մայիսից մինչեւ 2023 թվականի սեպտեմբերը Հայաստանի տարածքից ինքը ներխուժել եւ գրավել է 207 քմ տարածք, դրա մասին չի խոսվում: Ալիեւը մեկ անգամ հայտարարեց, որ այն տարածքները, որոնք մենք գրավել ենք, մերն է, դրանք մեր բարձրունքներն են:

Ալիեւի ասածն այն է, որ պետք է իր ասածները անենք, որ խաղաղության պայմանագիր կնքենք, իր ասածը դա է, ոչ թե բանակցելը, այլ իրենց պահանջը կատարելը»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ

ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի տան տարածքում պայթուցիկ նետած անձանցից երկրորդ անձին իրավապահները հայտնաբերել են, ու խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Փորձեցինք տեղեկությունը պարզել ՆԳՆ-ից, որտեղից ի պատասխան՝ հայտնեցին, որ երկրորդ անձը եւս հայտնաբերվել է եւ կալանավորված է:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ կալանավորվածները խոստովանել են, որ իրենք են պայթուցիկը նետել. ըստ նախնական նրանց բացատրության՝ այդ քայլին գնացել են ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանին սթափեցնելու համար:

Հիշեցնենք, որ Նոյ թաղամասի 143/1 տան բակում պայթուցիկ էր պայթել: Վերոնշյալ հասցեի բնակիչ Արթուր Բաղդասարյանի բակում ենթադրյալ հանցագործները պայթուցիկ նյութ էին նետել: Վերջինս մեզ հետ զրույցում հայտնել էր, որ դեպքը ո՛չ իր հարազատների, ո՛չ ընտանիքի անդամների հետ չի կարող առնչություն ունենալ: Ավելին՝ վստահեցրել էր, որ դեպքից առաջ որեւէ միջադեպ չի եղել, որից դրդված ենթադրյալ հանցագործները կարող էին գալ ու իր բակ պայթուցիկ նյութ նետել: Իսկ թե ինչի են հատկապես իր բակ նետել, Արթուր Բաղդասարյանը նշել էր, որ միգուցե կատարվածը թյուրիմացություն է, ու ամեն ինչ կպարզեն իրավապահները: Եվ, ահա, իրավապահ համակարգում նախնական տեղեկություններ կան, որ պայթուցիկը սխալմամբ է հայտնվել Արթուր Բաղդասարյանի բակում, եւ այն ուղղված է եղել անձամբ ՔՊ-ական պատգամավորի դեմ, որի բնակարանը վերոնշյալ հատվածում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ

ԻՍՊԱՆԱՑԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Իսպանացի պատգամավոր Ջոն Ինյարիտուն կարծում է, որ միջազգային հանրությունը պետք է նպատակաուղղված պատժամիջոցներ կամ այլ պատիժներ սահմանի այն անձանց կամ կազմակերպությունների նկատմամբ, որոնք պատասխանատու են Լեռնային Ղարաբաղի հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացման եւ աղագա խախտումները կանխելու համար:

«Ըստ երեւույթին, սա այն գիծն է, որն առաջարկվում է Եվրախորհրդարանի կողմից: Այդուհանդերձ, ես այդքան էլ լավատես չեմ այս հարցում՝ հաշվի առնելով, որ Ալիեւի ռեժիմը 2020-2023 թվականներին կազմակերպել է ԼՂ-ի ամբողջ բնակչության էթնիկ զտում, սակայն պատժամիջոցներ չեն ընդունվել»,- ափսոսանք հայտնեց իսպանացի պատգամավորը:

Անդրադառնալով միջազգային հանրությունից ակնկալվող հստակ քայլերին՝ պատգամավորը շեշտեց, որ Ադրբեջանի կողմից իրականացվող խախտումներին եւ վանդալիզմին վերջ դնելը պահանջում է բազմակողմանի մոտեցում՝ ներգրավելով ինչպես դիվանագիտական ու իրավական, այնպես էլ մշակութային ջանքեր:

«Թեեւ միջազգային հանրությունը դիվանագիտական երկխոսության մեջ է Ադրբեջանի եւ Հայաստանի հետ՝ ձգտելով հասնել վերջնական խաղաղության, այդուհանդերձ, առանց հենց Լեռնային Ղարաբաղում՝ գետնի վրա իրավիճակը վերահսկող անկախ միջազգային մոնիտորինգի մեխանիզմների, անհնար կլինի պաշտպանել տեղի հայկական ժառանգությունը»,- ընդգծեց պատգամավորը:

Ջոն Ինյարիտուի կարծիքով՝ հայկական կողմը եւս այստեղ անելիքներ ունի, եւ անհրաժեշտ է, որ օգտագործի բոլոր օրինական միջազգային հարթակները եւ ինստիտուտները, ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն եւ Արդարադատության միջազգային դատարանը, որոնք պետք է պատասխանատվության ենթարկեն Ադրբեջանին մշակութային այս նոր ոչնչացման համար:

«Քաղաքացիական հասարակությունը պետք է խրախուսի մշակութային կրթության եւ իրազեկման ծրագրերը ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային մակարդակով: Լրատվամիջոցների, հանրային իրազեկման քարոզարշավների միջոցով պետք է բարձրացնել Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության պահպանման կարեւորության մասին իրազեկվածությունը»,- հավելեց պատգամավորը:

Իսպանացի պատգամավոր Ջոն Ինյարիտուի կարծիքով՝ Ադրբեջանի վարչակարգի ձեռնարկած գործողությունները Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության միջազգային նորմերի եւ սկզբունքների կոպտագույն խախտում են հանդիսանում:

«Այդ նորմերը միանշանակ արգելում են ուժի կիրառումը եւ ինքնիշխան ազգերի տարածքային ամբողջականության ոտնահարումը: Ադրբեջանի կողմից իրականացվող համառ խախտումները ոչ միայն խաթարում են տարածաշրջանային կայունությունը, այլեւ քայքայում են հարեւան պետությունների միջեւ վստահության եւ համագործակցության հիմքերը»,- ընդգծեց պատգամավորը՝ անդրադառնալով այն դիտարկմանը, որ Ադրբեջանը, 2021 թվականից սկսած, խախտել է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը՝ մի քանի անգամ հարձակվելով եւ օկուպացնելով որոշ տարածքներ:

Պատգամավորի պնդմամբ՝ միջազգային հանրության համար այս հանգամանքը հրամայական է, որպեսզի Ալիեւի ռեժիմի դեմ վճռական միջոցներ կիրառվեն:

«Չնայած այս մտահոգիչ զարգացումներին՝ Եվրամիությունը ձեռնպահ է մնացել Ադրբեջանի կամ նրա ղեկավարության դեմ պատժամիջոցներ կիրառելուց: Այս խախտումներին չանդրադառնալը ոչ միայն քաջալերում է հետագա ագրեսիան, այլեւ ստեղծում է վտանգավոր նախադեպ, որը սպառնում է ամբողջ տարածաշրջանի խաղաղությանը եւ անվտանգությանը», - հայտարարեց նա:

Անդրադառնալով Ադրբեջանի կողմից ապօրինի կերպով պահվող հայ ռազմագերիների խնդրին, որոնց թվում են նաեւ Լեռնային Ղարաբաղի նախկին ղեկավարները, իսպանացի պատգամավորն ասաց, որ նրանք պետք է ազատ արձակվեն եւ կարողանան վերամիավորվել իրենց ընտանիքների հետ:

«Ալիեւի ռեժիմի տակ գտնվող ադրբեջանցի քաղբանտարկյալների, այլախոհների եւ լրագրողների նկատմամբ վերաբերմունքը լավ փաստագրված է, որը բնութագրվում է մարդու իրավունքների համակարգային ոտնահարումներով եւ պատշաճ դատավարության կոպտագույն անտեսմամբ: Ուստի, Բաքվում անօրինական կերպով պահվող բոլոր հայ գերիներին պետք է ազատ արձակել եւ թույլ տալ վերամիավորվել իրենց ընտանիքների հետ: Նրանց՝ ընտանիքների հետ նման վերամիավորումը ոչ միայն բարոյական հրամայականի հարց է, այլեւ կարեւոր քայլ՝ տարածաշրջանում հաշտեցման եւ ապաքինման համար»,- եզրափակեց պատգամավորը:

2021 թվականից ի վեր Ադրբեջանը խախտել է Հայաստանի տարածքային ամբողջականությունը եւ ապօրինաբար օկուպացրել ավելի քան 150 քառակուսի կիլոմետր տարածք:

Բաքվում ապօրինի պահվող անձանց թվում են նաեւ Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահները՝ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արայիկ Հարությունյանը, ինչպես նաեւ ԼՂ նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ԱԺ նախագահի պաշտոնը զբաղեցրած Դավիթ Իշխանյանը, պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը, ՊԲ նախարարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը, որոնց Ադրբեջանն ապօրինի ձերբակալել եւ կեղծ մեղադրանքներ է առաջադրել 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական ագրեսիայից հետո:

ՇՎԱՅՑ ԲԱՐՔԵՐ

Ո՞Վ Է «ԳՈԼԴ» ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՏԵՐԸ

«Գոլդ» համարանիշների աճուրդը ավարտվեց 2024 թվականի փետրվարի 28-ին: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ 7 համարանիշները վաճառվել են 156 մլն դրամով, այդ թվում է նաեւ՝ բոլորի կողմից ցանկալի 000 OO 00 համարանիշը:

ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ համարանիշները ձեռք է բերվել «Առանցք» ՍՊԸ-ի կողմից: Ուսումնասիրության արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից տեղեկացանք, որ «Առանցք» ՍՊԸ-ն պատկանում է Գագիկ Սամվելի Առուշանյանին, ով ՍՊԸ-ի տնօրենն է:

Ըստ ՀՀ ընտրողների պետական ռեգիստրի՝ Գագիկ Առուշանյանը բնակվում է Սյունիքի մարզի Գորիս համայնքում եւ գրանցված է նույն հասցեում, որտեղ գրանցված է նաեւ Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը, այսինքն՝ Գագիկ Առուշանյանը համայնքապետի հայրն է:

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ համարանիշները գրանցված են Mercedes-benz G63 AMG 4.0 մեքենայի վրա, որը օրերս շրջում էր Երեւանի փողոցներում, իսկ ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել է մեքենան:

ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել Առուշ Առուշանյանի հետ, սակայն ինչպես միշտ, նա որեւէ զանգի չարձագանքեց:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ

ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ՀՈՐԴՈՐՈՎ Է ԴԻՄԵԼ

Փաստաբան Արթուր Գոյունյանը ArmLur.am-ի հետ զրույցում զգոնության հորդորով է դիմել արտերկրում բնակվող մեր հայրենակիցներին. «2023թ. հանրապետությունում արձանագրվել են կեղծ լիազորագրերով թանկարժեք բնակարանների իրացման շուրջ երկու տասնյակ դեպքեր, որի արդյունքում Հայաստանից տեւական ժամանակով բացակայած անձանց բնակարանները հայտնվել են անդրազգային հանցավոր խմբավորման թիրախում՝ խարդախ հնարքների կիրառմամբ օտարվել եւ դարձել են հափշտակության օբյեկտներ:

Հիշյալ հանցավոր խմբավորման զոհերից է հանդիսանում նաեւ փաստաբան Արթուր Գոյունյանին իրավաբանական օգնության դիմած, Ուկրաինայում բնակվող մեր հայրենակիցը, ում սեփականության իրավունքով պատկանող՝ շուրջ 200.000.000 ՀՀ դրամ արժողությամբ 106 մ2 մակերեսով բնակարանը նույնպես դարձել է հափշտակության առարկա: Վերջինիս ընտանիքն անշարժ գույքի նկատմամբ ոտնձգության մասին տեղեկացել է միայն 2024թ. մարտի սկզբներին, երբ նրանք պատահաբար պարզել են, որ իրենց բնակարանը բաժանվել է երկու մասի, այն նախկին մեկի փոխարեն ունի երկու մուտք, եւ դրանցում ընթանում են վերանորոգման աշխատանքներ: Փաստաբանական հարցումների արդյունքում պարզվել է, որ հիշյալ բնակարանը Դաղստանի բնակչուհի հանդիսացող ՌԴ քաղաքացու անվամբ ձեւակերպված կեղծ լիազորագրով օտարվել է դեռեւս 2023թ. ապրիլին նոտարական կարգով վավերացված առուծախի պայմանագրով՝ շուկայականից մի քանի անգամ ցածր գնով՝ 58.200.000 ՀՀ դրամով: Միաժամանակ պարզվել է նաեւ, որ բնակարանի այսպես կոչված գնորդը գործարքի ձեւակերպումից հետո բնակարանը բաժանել է երկու միավորի, որոնց նկատմամբ գրանցելով իր սեփականաության իրավունքը՝ հետագայում ցանկացել է այն օտարել՝ հավանաբար իրական բարձր գնով, սակայն դա նրան չի հաջողվել: Վերոհիշյալ հարցումների արդյունքներով ստացված տեղեկատվության ամփոփմամբ է միայն պարզ դարձել, որ Ուկրաինայում բնակվող մեր հայրենակիցը միակ զոհը չէ, որ ՌԴ նույն քաղաքացու անվամբ ձեւակերպված կեղծ լիազորագրերով նմանատիպ եղանակով հանցավոր խմբավորման անդամների կողմից օտարվել է եւս 4 բնակարան: Ինչպես նշված 5, այնպես էլ մեկ տասնյակից ավել դեպքերով բնակարանների օտարման փաստերով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերով քննչական վարչությունում 2023թ. սեպտեմբերին նախաձեռնվել է քրեական վարույթ: Հայաստանից դուրս բնակվող եւ տեւական ժամանակ երկրից բացակայող մեր հայրենակիցներին փաստաբանը հորդորում է միջոցներ ձեռնարկել սեփականության իրավունքով իրենց պատկանող, հատկապես Երեւանի փոքր կենտրոնում գտնվող գույքի անձեռնմխելիությունը պարզելու համար՝ հաշվի առնելով արձանագրված նմանօրինակ բազմաթիվ դեպքերը, ինչպես նաեւ այդպիսիք հետագայում ի հայտ բերելու հավանականությունը: Առաջնահերթության կարգով անհրաժեշտ է այցելել բնակարաններ եւ ցանկացած կասկածելի հանգամանքների ի հայտ գալու դեպքում հարցումներ կատարել ՀՀ կադաստրի կոմիտե եւ սեփականության փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն ստանալիս իրավաբանական մասնագիտական օգնության համար անմիջապես դիմել փաստաբանի՝ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու, մեղավոր անձանց պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու եւ անշարժ գույքի նկատմամբ կորսված իրավունքները վերականգնելու նպատակով: Հատկանշական է, որ արձանագրված դեպքերի վերաբերյալ հասանելի տեղակատվության համաձայն՝ այսպես կոչված գնորդները կասկածելիորեն ջանքեր չեն գործադրել գույքի սեփականատերերի հետ անձամբ գործարքը քննարկելու համար, վստահել են նրանց անունից հանդես եկած այլազգիներին, առուծախը ձեւակերպել են ակնհայտ էժան գնով, իսկ գործարքների բարեհաջող ավարտից հետո՝ կարճ ժամանակահատվածում, այն բարձր գնով իրացրել այլ անձանց: Ակնհայտ կասկածելի գործարքները ենթարկվել են նոտարական վավերացման, ապա ՀՀ կադաստրի կոմիտեում ստացել պետական գրանցում: Նկատի ունենալով, որ կեղծ լիազորագրերով անշարժ գույքի առուծախի վերաբերյալ նմանատիպ եղանակով գործարքների ձեւակերպմամբ բնակարանների օտարման հարցում ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան աշխատակիցների, նոտարների, ինչպես նաեւ այսպես կոչված գնորդների արարքներին դեռեւս վերջնական իրավաբանական գնահատական չի տրվել, եւ վերջիններիս հավանական առնչակցության հարցը պարզաբանման ենթակա է վարույթ իրականացնող մարմնի կողմից, սակայն, ամեն դեպքում, հետագայում նման դեպքերը բացառելու նկատառումներով պայմանավորված՝ ավելորդ չէր լինի, որպեսզի հիշյալ մարմիններում այսուհետ կիրառվեին հատկապես օտարազգի անձանց անվամբ ներկայացվող լիազորագրերի հավաստիության ստուգման երաշխավորված գործիքակազմեր: Ինչ վերաբերում է հիշատակված դեպքով գնորդի բարեխղճության հարցին, ապա չխախտելով անմեղության կանխավարկածը՝ այնուամենայնիվ, հարկ է արձանագրել, որ, բարեբախտաբար, վերջինիս չի հաջողվել բնակարանը վերավաճառել, նրա կողմից ակնհայտ էժան գնով հայազգի անձնավորության սեփականությունը հանդիսացող գույքի ձեռքբերումն իբր դրա համար լիազորված դաղստանցի կնոջից, ապա հաջորդող կարճ ժամանակահատվածում բնակարանը երկու միավորի հապշտապ բաժանելը, ինչպես նաեւ գերշահույթ ստանալու ակնկալիքով դրանց օտարման խափանումը կարող է վկայել առնվազն նրա ոչ բարեխիղճ գնորդ հանդիսանալու փաստի մասին, ինչին, հուսով ենք, նույնպես կտրվի համարժեք իրավական գնահատական»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԳՈՒՅՔԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ Երեւան քաղաքի վարչական շրջաններից մեկի նախկին ղեկավարը տվյալ համայնքում գտնվող նախադպրոցական հաստատության տարածքն ապօրինի, անհատույց իրենը դարձնելու դիտավորությամբ պայմանավորվածություն է ձեռք բերել իր մտերիմ Ա. Շ.-ի հետ նշված տարածքը Երեւան համայնքից հափշտակելու վերաբերյալ: Մասնավորապես, Ա. Շ.-ն նշված հասցեի նկատմամբ իր սեփականության իրավունքը գրանցելու վերաբերյալ 2018թ. դիմում է հասցեագրել համայնքի ղեկավարին: Վերջինս էլ, խախտելով օրենսդրությամբ սահմանված նորմերը, համաձայն որոնց՝ տվյալ գույքը կարող է օտարվել միայն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում, եւ օտարվելու դեպքում էլ այն կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով, կազմել է նախադպրոցական ուսումնական հաստատության տարածքի մի մասը մասնավորեցնելու վերաբերյալ Երեւանի քաղաքապետի որոշման նախագիծ: Այնուհետեւ հիշյալ պաշտոնատար անձը, նշված որոշման նախագծին կցելով կեղծ տվյալներ պարունակող պաշտոնական փաստաթղթեր, Երեւանի քաղաքապետարան է ներկայացրել իրականում գոյություն չունեցող՝ 2005 թվականի սեպտեմբերի 7-ով թվագրված կեղծ որոշում, համաձայն որի՝ Ա. Շ.-ն եւ վերջինիս ընտանիքի անդամները ճանաչվել են օտարվող տարածքի վարձակալ: Այսպիսով, 2018 թվականի փետրվարի 12-ին, կեղծ տվյալներ բովանդակող տեղեկանքի հիման վրա, Երեւանի քաղաքապետի որոշմամբ, նշված տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը նվիրաբերվել է վարչական շրջանի ղեկավարի մտերիմ Ա. Շ.-ին: Այնուհետեւ հափշտակված գույքին օրինական տեսք տալու եւ դրա հանցավոր ծագումը խեղաթյուրելու նպատակով հիշյալ տարածքը 2018 թվականի փետրվարի 28-ին ձեւակերպվել է Ա. Շ.-ի անվամբ, ով էլ, իր հերթին, նշված առանձնապես խոշոր չափերի՝ 18.720.000 ՀՀ դրամ շուկայական արժեքի գույքը 2019թ.-ին նվիրատվության պայմանագրով փոխանցել է վարչական շրջանի ղեկավարի դստերը:

Բացի այդ, վերը նշված պաշտոնատար անձը կազմել է միայն ուսումնական նպատակներով օտարելու ենթակա մեկ այլ գույք մասնավորեցնելու վերաբերյալ Երեւանի քաղաքապետի որոշման ապօրինի նախագիծ, որի հիման վրա՝ մանկապարտեզի տարածք հանդիսացող՝77.1 քմ մակերեսով եւ 11.400.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող տարածքը նվիրատվությամբ օտարվել է իր աշխատակցին՝ Երեւան համայնքին պատճառելով առանձնապես խոշոր չափի գույքային վնաս: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կողմից վարչական շրջանի նախկին ղեկավարին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178?րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, իսկ Ա. Շ.-ին՝ 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննելու համար:

ԻՆՉՊԵՍ ԵՂԱՎ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԵՆ ԿԱՆՉԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Հակակոռուպցիոն դատարանը ծանուցում է ուղարկել Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանին որպես վկա հարցաքննելու համար: Ղուկասյանը դատարան դիմում է ներկայացրել՝ հայտնելով, որ առողջական վիճակը վատ է:

Հիշեցնենք, որ թաղապետը դատարան պետք է ներկայանա իր ենթակաների՝ պաշտոնեական դիրքի չարաշահման գործով: Իրավապահները կալանավորել են Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Տիգրան Ռաֆիկի Մարտիրոսյանին, նույն բաժնի առաջատար մասնագետ Արման Նվերի Հարությունյանին:

Ըստ նախաքննական մարմնի պաշտոնական տեղեկության՝ վերջիններս նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, ունենալով տեղական ինքնակառավարման մարմնի անունից հանդես գալու լիազորություն, ինչպես նաեւ նույն մարմնի անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձինք, Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքներն իրականացնող «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության տնօրեն Կամո Գերասիմի Գեւորգյանի նկատմամբ իրենց ծառայողական լիազորությունների իրականացման հետ կապված ընդհանուր բերեհաճ վերաբերմունքի համար 2023 թվականի հուլիսի 11-ին Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմի վարչական շենքում Կամո Գեւորգյանից ստացել են խոշոր չափերով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ կաշառք-գումար, որը վերջինս անձամբ տվել է Տիգրան Մարտիրոսյանին, որը ստացված կաշառք-գումարից 150.000 դրամը հաջորդ օրը փոխանցել է Արման Հարությունյանին:

Նկատենք, որ նախաքննական մարմինը պատասխանատվության չի կանչել Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանին այն բանի համար, թե ինչպես եղավ, որ նրա ենթակաները, առանց իր իմացության, նման պատժելի քայլի գնացին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 6-ից մարտի 7-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 111 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՊԱՐՏՎԵՑ

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ Արա Խլոյանի 2021 թ. հունիսի 25-ի հրամանով՝ Արտակ Հարությունյանն ազատվել է ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի պետի պաշտոնից: Վերջինս դիմել է դատարան: 2022 թ. ապրիլի 27-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը վճռել է հայցը բավարարել, անվավեր ճանաչել Ա. Խլոյանի վերոհիշյալ հրամանը, Ա. Հարությունյանին վերականգնել իր նախկին աշխատանքում, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հօգուտ Ա. Հարությունյանի բռնագանձել միջին աշխատավարձը՝ հաշվարկը կատարելով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: Ա. Հարությունյանը կրկին դատարան է դիմել, այս անգամ՝ «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ Ռոբերտ Ալիխանյանի՝ 2023թ? մարտի 24-ի թիվ 67-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջով: Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Ա. Հարությունյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն: Դիմելով դատարան՝ նա հայտնել է, որ 2023թ. մարտի 23-ին ««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ժ. Սահաբալյանի եւ այդ ՊՈԱԿ-ի աշխատակցի կողմից ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ Ռ. Ալիխանյանին ներկայացվել են զեկուցագրեր, որով հայտնել են, որ 2023թ. մարտի 19-ին «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղում մասնաճյուղի ղեկավար Ա. Հարությունյանը քաղաքացուն թույլատրել է 7-րդ պահաբաժնում իրականացնել փայտանյութի ինքնապատրաստում, որ Ա. Հարությունյանը խախտել է ազգային պարկի տնօրենի բանավոր ցուցումը՝ առանց ղեկավարությանը տեղեկացնելու հանգստյան օրն ինքնագլուխ գործունեություն է ծավալել: Հայցվորը դատարանին հայտնել է, որ 2023թ. մարտի 24-ին ստանալով նշված զեկուցագրերը՝ ինքը բացատրություն է ներկայացրել տնօրենի ԺՊ Ռ. Ալիխանյանին, որով հայտնել է, որ վերահսկել է փայտանյութի ինքնապատրաստման աշխատանքները, իսկ նշված օրն աշխատելը բխել է բացառապես իր աշխատանքային պարտականություններից: 2023թ. հուլիսի 31-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը վճռել է հայցը բավարարել, անվավեր ճանաչել Ռ. Ալիխանյանի 2023թ. մարտի 23-ի թիվ 67-Ա հրամանը, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հօգուտ Ա. Հարությունյանի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, այդ ՊՈԱԿ-ից պետական բյուջե բռնագանձել 20.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Այդ վճռի դեմ ««Դիլիջան» ազգային պարկը» վերաքննիչ բողոք է ներկայացրել: 2024թ. մարտի 1-ին վերաքննիչ դատարանը (նախագահող դատավոր՝ Լ. Հովհաննիսյան) որոշել է վերաքննիչ բողոքը մերժել, դատարանի 2023թ. հուլիսի 31-ի վճիռը թողնել անփոփոխ; Այդ որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ նույն ժամկետում կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՎ ԵՆ ԻՐԵՆՔ

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՈՎ ՀԱՆԳԻՍՏ՝ ՄԻԼԱՆՈՒՄ

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանն իր ֆեյսբուքյան էջում գրառում է կատարել, որտեղ գրված էր. «Միլանի իմ հանգիստը հովանավորվում էր .... մի անձի կողմից, ով վիրավորել էր ինձ ու, դատարանի որոշմամբ, վիրավորանքի համար փոխհատուցել: Հետեւաբար մի՛ վիրավորեք մարդկանց, թե չէ հետո կարող եք անակնկալի գալ, հետո էլ՝ տխրել»: Կից տեղադրել է նկար, որտեղ երեւում է, որ նյարդավիրաբույժ Մարինա Խաչատրյանը հրապարակավ ներողություն է խնդրում նախարարի տեղակալից:

ArmLur.am-ը կապ հաստատեց նյարդավիրաբույժ Մարինա Խաչատրյանի հետ՝ լսելու իր մեկնաբանությունը այս իրավիճակի մասին. «Ես համարում եմ, որ սա մեր ամբողջ կյանքի, մեր Հայաստանի տրադիցիայի մի փոքր մասն է, որովհետեւ սույն տիկինը ինձ համար գոյություն չունի, ինքը ինձ համար ո՛չ պաշտոնյա է, ո՛չ ինչ-որ կերպար է ինձ համար: Ինքը վիրավորել է իմ բժշկական հանրությանը, ես պաշտպանել եմ բժշկական հանրության շահը, որովհետեւ ոչ ոք չի կարող իրեն վերապահել զրկել բժիշկներին լիցենզիայից, այդ մարդիկ իր դուրը գան, թե չգան: Լկտի ձեւով արտահայտվեն բժիշկների հասցեին, եւ ցանկացած մեկը՝ դա կլինի ձեր նշած անձը, կլինի ավելի բարձրաստիճան պաշտոնով մեկը, կլինի սարի չոբան, ով ուզում է լինի, իմ սպիտակ խալաթը կրող բժշկական հանրության մասին ոնց էլ վատ արտահայտվի, պատասխան է ստանալու նույնկերպ կամ ավելի կոշտ»: Նրա խոսքով՝Լենա Նանուշյանի մասին չէ խոսքը, այլ խնդիրը դատական համակարգի մեջ է. դատավորները գտնում են, որ կարելի է վիավորել ինչ-որ մասնագիտական հանության, եւ նա այս պարագայում չի խուսափում տվյալ դատավորի կերպարով վիրավորել դատական հանրությանը: Մարինա Խաչատրյանը չի պատրաստվում որեւէ բան անել: Նրա խոսքով՝ դատարանը օրենքի խախտումով վճիռ է կայացրել: «Ներկայիս ԲԴԽ-ի՞ն պիտի դիմեմ իր ԲԴԽ նախագահով, այս դատավորի՞ն պիտի դիմեմ այս իշխանության օրոք. ո՞վ են իրենք: Իրենք իրենց պատասխանը ու պատիժը կստանան որոշ ժամանակ անց, որովհետեւ բոլորն էլ լավ գիտակցում են, որ ամեն ինչ անցողիկ են՝եւ՛ լավը, եւ՛ վատը. իրենք բոլորը կորցնելու են իրենց պաշտոնները, իրենք կանգնելու են ոչ միայն հայկական, այլ նաեւ միջազգային դատարանի առաջ (ես այդ ամենը հոգալու եմ): Ուղղակի հիմա իմ հայրենիքն է վտանգի մեջ, իմ հայրենիքն է կանգնած գոյաբանական խնդրի մեջ, ու ես հիմա նման փոքրիկ կերպարներին անդրադառնալուն իմ ժամանակը չեմ տրամադրի»,- ասաց նա: Մարինա Խաչատրյանը, ի պատասխան նրան, որ Լենա Նանուշյանը դատարանում ստացած փոխհատուցման գումարով մեկնել է Միլան, ասաց. «Այսօրվա պաշտոնյաները փաստացի, իմ ձեւակերպմամբ, իրենց ապօրինի ձեւով ստացած գումարները ծախսում են հաճույքների վրա. դա իրենք չեն մարսելու: Հույս ունեմ, որ Նանուշյանն իր մեջ խղճի պատառիկներ կգտնի ու Միլանից ցավակցական հեռագիր կուղարկի այսօր Երեւանում ջրծաղիկից մահացած 9-ամյա բալիկի ծնողներին»: Հիշեցնենք, որ նյարդավիրաբույժ Մարինա Խաչատրյանը 2021 թվականին երեք հրապարակման միջոցով վիրավորական արտահայտություններ է գրել փոխնախարար Լենա Նանուշյանի հասցեին: Նանուշյանը, «Ֆեյսբուք»-ի իր էջում անդրադառնալով դատական վճռին, գրել է. «Կովիդ վակցինացիայի ընթացքում Առողջապահության նախարարության ղեկավար անձնակազմի հանդեպ հնչած վիրավորանքների պակաս չենք ունեցել: Ով տեղից ելնում, որոշում էր անձնական վիրավորանք հասցնել, այնինչ գիշեր-ցերեկ անում էինք մեր գործը՝ մարդկանց կյանքեր փրկելու համար: Այս դատավճիռը, մանավանդ՝ 1 մլն փոխհատուցումը, հուսամ կսթափեցնի որոշ մարդկանց, որոնք մտածում էին, թե իրենց կարելի է մարդկանց պատվի ու արժանապատվության հետ խաղալ՝ անպատիժ մնալով: Շնորհակալություն փաստաբանիս ու իր թիմին արդարություն գտնելու ճանապարհին օգնելու համար»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԴԵՄ ԵՆ

«ԵՐԵՎԱՆՑԻՆ ՊԵՏՔ Է «ՈՉ»-Ը ԱՍԻ»

Երեւանի ավագանու՝ մարտի 12-ի նիստի օրակարգում ընդգրկված է միասնական տոմսային համակարգի ներդրման մասին նախագիծը, որով ուղեվարձը թանկանալու է: Այս խնդրով ակտիվիստ, բլոգեր Արթուր Չախոյանն իր ֆեյսբուքյան էջում գրառում է կատարել՝ հայտարարելով, որ վաղը քաղաքապետարանի շենքի առաջ տեղի է ունենալու «Դեմ եմ տրանսպորտի թանկացմանը» ակցիան, որին ինքը եւս մասնակցելու է եւ հայտնելու է իր անհամաձայնությունը:

Այս հարցով ArmLur.am-ը կապ հաստատեց Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» կուսակցության անդամ Իզաբելլա Աբգարյանի հետ՝ պարզելու համար՝ արդյոք իրենց կուսակցությունը մասնակցելու է եւ հայտնելու է իր անհամաձայնությունը, ինչին ի պատասխան՝ Աբգարյանն ասաց. «Մենք վաղը նիստի ենք լինելու եւ, բնականաբար, այդ ժամին լինելու ենք այդտեղ. իհարկե, կշփվենք մարդկանց հետ, ու դա բնական է: Դիրքորոշում իհարկե հայտնելու ենք, մեր դիրքորոշումը չի փոխվել, եւ մենք միշտ էլ նույնն ենք կրկնում, որ 100 դրամից ավելը մեզ համար անընդունելի է, որ քաղաքացիներից գանձեն»: Աբգարյանի խոսքով՝ տոմսը չի կարող 100 դրամից ավելի արժենալ, եւ այս փաթեթները ձեռնտու են օրական 4 եւ ավել անգամ տրանսպորտից օգտվող մարդկանց, բայց մնացածի համար սա անհեթեթություն է: Անդրադառնալով նաեւ տարիներ առաջ տեղի ունեցած դեպքերին, երբ տրանսպորտի թանկացման համար շատ հայտնիներ ցուցանակներով դուրս էին եկել պայքարելու 150 դրամի դեմ, Աբգարյանն ասաց. «Այդ նույն մարդիկ, որոնք «օլիգարխների» դեմ էին պայքարում, այսօր շատ լավ էլ հարմարվել են այդ ամենի հետ, պարզապես նախկին համակարգը դարձրել են իրենցը, եւ իրենց հիմա շատ հաճելի է այդ ամենը: Սա ընդհանուր տրամաբանության մեջ է մտնում, որ, որպես այդպիսին, հեղափոխություն տեղի չի եղել, նրանք պարզապես տեղավորվել են աթոռների վրա, եւ նույն համակարգը պահպանելով, նույն հենասյուների վրա, նույն մեթոդներով ընտրությունների գնալը նաեւ անիմաստ բան է դարձել: Դրա համար ես չեմ զարմանում, որ նրանք լռում են, որ համաձայն են: Նրանք մոռացել են, որ Քոչարյանին մեղադրում էին նույն բանի համար: Հիմա իրենք են նույնը համարում նորմալ, այնպես որ, պարզապես ժամանակը ապացուցեց, որ իրենք ոչ թե սկզբունքների համար էին պայքարում, այլ ուզում էին, որ այդ ամենը իրենցը լինի, եւ իրենք անեն»: Աբգարյանը նաեւ նշեց, որ երեւանցիները թույլ չպետք է տան, որ այդ նախագիծը ընդունվի: «Երեւանցին պետք է «ոչ»-ը ասի, քանի որ օրենքը ուժի մեջ է մտնելու սեպտեմբերի 1-ից, եւ երեւանցիները ունեն իրավունք չենթարկվելու քաղաքապետարանի որոշմանը, այսինքն՝չվճարել այդ գումարը»,- եզրափակելով զրույցը՝ ասաց Աբգարյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 2 մարդ զոհվել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՏՎՅԱԼՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Վիճակագրական կոմիտեն հրապարակել է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը: 2024 թվականի հունվարին պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունը, ըստ ՀՀ մարզերի եւ քաղաք Երեւանի, հետեւյալն է. Վիճակագրական կոմիտեի աշխատանքի շուկայի ցուցանիշների հրապարակած տվյալների համաձայն՝ ՀՀ մարզերից գործազրկության ամենաբարձր ցուցանիշը դիտվել է Լոռու մարզում: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023 թվականի հունվար ամսին կազմել է 48 հազար 357 մարդ, իսկ 2024 թվականի հունվար ամսին կազմել է 45 հազար 872 մարդ: Եթե համեմատենք, կստացվի, որ այս տարի, նախորդ տարվա համեմատ, այս ցուցանիշը կրճատվել է 2 հազար 485 մարդով: Խորհրդատվություն ստացած աշխատանք փնտրողների քանակը կազմել է 6 հազար 223 մարդ: Աշխատուժի պահանջարկը եւ թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը հունվար ամսին կազմել են 3 հազար 156 մարդ, մեկ թափուր աշխատատեղի համար պայքարում է 20 անձ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ո՞ՐՆ ԷՐ ՊԱՏՃԱՌԸ

Արարատի մարզի բնակիչ 9-ամյա երեխայի մահվան պատճառը պարզ կդառնա դատաբժշկական փորձաքննությունից հետո. այս մասին հայտնում են ԱՆ-ից:

«Երեխան մարտի 7-ից ունեցել է ջրծաղիկին բնորոշ ցան եւ այլ ախտանշաններ: Մարտի 10-ին որովայնացավերի պատճառով դիմել են «Արարատի» ԲԿ, որտեղ նախնական ախտորոշվել է ինֆեկցիոն տոքսիկ շոկ, ջրծաղիկ «կասկածելի»:

Մի քանի ժամ անց ընդհանուր վիճակի կտրուկ վատացման ֆոնին որոշում է կայացվել երեխային տեղափոխել Երեւանի բուժկենտրոններից մեկը հետագա հետազոտման եւ բուժման նպատակով:

Ճանապարհին դիտվել է երեխայի վիճակի կտրուկ վատացում, սրտի կանգ, նրան տեղափոխել են ամենամոտ տեղակայված բուժհաստատություն՝ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն, ժամը 23:30-ին:

50 որպես տեւողությամբ կատարված լայնածավալ վերակենդանացման միջոցառումները եղել են անարդյունավետ:

Սրտի ռիթմը չի վերականգնվել, եւ ժամը 00:20-ին արձանագրվել է կլինիկական մահ:

Ի պատասխան մամուլի հրապարակումների՝ հայտնում ենք, որ երեխայի մահվան վերջնական պատճառը հնարավոր է պարզել միայն դատաբժշկական փորձաքննությունից հետո»,-ասված է հաղորդագրության մեջ:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

«ԹԵ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ, ՈՒՂԵՎԱՐՁԸ ՄԱՆԱԹՈՎ ԿՎՃԱՐԵՆՔ»

Երեւանի ավագանին մարտի 12-ին արդեն վերջնական կընդունի տրանսպորտի ուղեվարձի թանկացման նախագիծը: Այն իրենից ենթադրում է մի քանի փաթեթներ, որոնք կկսեն գործել թանկացումից հետո տրանսպորտով ուղեւորափոխադրումների համար:

Ըստ նախագծի սկզբունքի՝ մեկ տարվա կտրվածքով երթեւեկության համար նախատեսված է մեկ անձի համար տրանսպորտի ուղեվարձը դարձնել 90.000 դրամ՝ քարտային տարբերակով, իսկ եթե ձեռք եք բերում էլեկտրոնային կրիչ, ապա՝ 88.000 դրամ: Ստացվում է՝ 1 ամսվա համար վճարվելու է 9000 դրամ, 1 օրվա համար 8 անգամ երթեւեկելը կարժենա 900 դրամ, իսկ 7 օրվա համար առավելագույնը 30 անգամ տրանսպորտով երթեւեկելը՝ 5000 դրամ, 90 որպե երթեւեկելը կարժենա 300 դրամ: 30 օրում 10 ուղեւորության համար քաղաքացիները կվճարեն 2200 դրամ: Նախագիծն առաջարկում է նաեւ տարեկան փաթեթ՝ 365 օրում անսահմանափակ երթեւեկելու համար՝ 90.000 դրամ: Կանխիկ գումար չունենալու դեպքում ուղեւորին հնարավորություն է տրվում ուղեվարձը վճարել Telcell էլեկտրոնային համակարգով, սակայն Telcell-ով վճարելու դեպքում էլ քաղաքացին պետք է ունենա նույնականացման դրամապանակ, որի բացակայության դեպքում էլ համակարգը տոմս գնելու թույլտվություն չի տալիս: Նախագծի սկզբունքներն ուսումնասիրելով՝ հասկանալի է դառնում, որ եթե նախագիծն ընդունվի, ապա քաղաքացիների մեծամասնությունը նախընտրելու է գնել էլեկտրոնային կրիչ՝ 90 հազար դրամի փոխարեն վճարելով 88 հազար: Երեւանի ավագանին, նոր նախագիծ մշակելով, մոռացել է հետեւել կանգառներին եւ ականատես լինել, թե ինչպես են քաղաքացիները ժամերով սպասում երթուղայինի, կամ թե ինչպես են իրենց մի կերպ խցկում երթուղայինի մեջ եւ այդպես անգամ ժամեր տեւող՝ տուն կամ աշխատանքի տանող ճանապարհին անցնում: Երեւանի հասարակական տրանսպորտի փոփոխման, բարելավման եւ համալրման արդյունքում պարզ դարձավ, որ հասարակական տրանսպորտային երթուղիները դեռեւս լիարժեք չեն ապահովում քաղաքացիների սպասարկման որակը: Նախագծի ընդունելուց հետո, չի բացառվում նաեւ, որ շատերը կնախընտրեն տաքսու ծառայությունից օգտվել կամ էլ անձնական ավտոմեքենա ձեռք բերել: Երեւանի ավագանու կողմից մշակված նախագիծը չընդունելու համար ընդիմադիր ավագանին եւ քաղաքացիները նույն օրը՝ մարտի 12-ին, բողոքի ակցիա են իրականացնելու Երեւանի քաղաքապետարանի դիմաց եւ պահանջելու, որ նախագիծը չընդունվի: Հասկանալու համար, թե ինչ դիրքորոշում ունեն քաղաքացիները նախագծի վերաբերյալ, ArmLur.am-ը երեկ շրջել է Երեւանի փողոցներով, զրուցել քաղաքացիների հետ, լսել նրանց մեկնաբանությունները: Հարցված քաղաքացիները միանշանակ դեմ են նախագծի ընդունմանը: Շատերը պատրաստակամ են միանալու բողոքի ակցիային, իսկ մի մասն էլ գտնում է, որ ակցիան սպասված արդյունքը չի ունենալու՝ կարծելով, որ հանրության խոսքը հաշվի չի առնվում: «Մենք մեր երկրում երրորդ-չորրորդ կարգի մարդ ենք մեզ զգում: Այսպես որ շարունակվի, կամ կգնանք ուրիշ երկիր, 7-րդ կարգի մարդ կդառնանք, կամ էլ ապրելու, շնչելու համար էլ կվճարենք, ու մի նստելն էլ 1000 դրամ կդարձնեն»,- ասում է քաղաքացին: ArmLur.am-ի հետ զրույցում 70-ամյա քաղաքացին ասում է, որ ինքն էլ է դեմ հասարակական տրանսպորտի ուղեվարձի թանկացմանը, սակայն ցույցերին չի գնալու: Ասում է. «Իմ տարիքը արդեն անցել է, որ ցույցի գնամ, երիտասարդները պիտի բողոքեն եւ իրենց ձայնը լսելի դարձնեն»: Հարցված քաղաքացիներից մեկն էլ գտնում է, որ եթե այսպես շարունակվի, ապա ուղեվարձը մանաթով կվճարենք:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱԿԱՆ Է ԱԶԴԵԼ

Մինչ 2024 թվականի մարտի 4-ը Արթուր Գասպարյանը զգալի ժամանակահատված զբաղեցնում էր Հայաստանի պետական պահպանության ծառայության պետի տեղակալի պաշտոնը, ապա պետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց: Մարտի 4-ից պաշտոնապես դարձավ ՊՊԾ պետ:

ՊՊԾ պետի տեղակալ եղած ժամանակ Գասպարյանը ներկայացրել է պաշտոնը զբաղեցնելու հայտարարագիր, որից հասկանում ենք, որ հեղափոխությունը դրական ազդեցություն է ունեցել նաեւ Գասպարյանի ունեցվածքի վրա:

Նա հայտարարագրել է Երեւանում գտնվող բնակարան՝ ձեռք բերված միանձնյա սեփականությամբ 2013 թվականին: 2020 թվականին ձեռք է բերել բաժնային սեփականությամբ բնակարան բազմաբնակարան շենքում, կրկին՝ Երեւանում:

2021 թվականին ձեռք է բերել միանգամից 2 անշարժ գույք՝ հողամաս Աշտարակ համայնքում եւ ավտոտնակ Երեւանում՝ միանձնյա սեփականությամբ:

2022 թվականին Արագածոտնի Աշտարակ համայնքում ձեռք է բերել կրկին հողամաս:

2017 թվականին նա ձեռք է բերել 2002 թվականի MITSUBISHI մակնիշի մեքենա:

Գասպարյանի բանկային ավանդները կազմել են 5 մլն դրամ: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել է 4 մլն 800 հազար դրամ, 6 հազար դոլար, 1800 եվրո:

Նրա տարեկան եկամուտները կազմել են 15 մլն 957 հազար դրամ, որից գրեթե 14 մլն դրամը աշխատանքի վարձատրություն եւ այլ եկամուտներ են ՊՊԾ-ից, 1 մլն 352 հազար դրամ կենսաթոշակ է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Հայտարարագրից տեղեկանում ենք, որ Գասպարյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 16 մլն 710 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարն է:

Բնակարանը ձեռք է բերված «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից կառուցապատվող բազմաբնակարան շենքում: Հավելենք, որ «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ն պատկանում է Հատուկ քննչական ծառայության նախկին գլխավոր քարտուղար Դավիթ Սուքիասյանին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՂԵՏԱԼԻ ՇՐՋԱՓՈՒԼ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՌԵՀԻԿ ՓՈՇԻԱՑՈՒՄ

ՖԱՀՖ-ն (Ֆիլմարտադրողների համահայկական ֆեդերացիա) հրավիրել է իր առաջին մամուլի ասուլիսը:

ArmLur.am-ը զրուցել է կինոռեժիսոր եւ պրոդյուսեր Հովհաննես Գալստյանի հետ (որը ՖԱՀՖ ՀԿ խորհրդի կողմից լիազորված անձ է)՝ պարզելու համար, թե ինչի մասին է լինելու ասուլիսը, եւ ինչի մասին են լինելու քննարկվող թեմաները:

Կինոռեժիսորի խոսքով՝ Հայաստանում դժվար է քննադատել կինոյի պետական կառավարման մոդելը ու չունենալ խնդիրներ, եւ ֆեդերացիայում միավորված են պրոֆեսիոնալներ, որոնք վերջին վեց տարում զրկված են եղել կինոյի պետական կառույցի աջակցությունից:

«Մեր ձայնը այսուհետ լսվելու է էլ ավելի բարձր ու խիստ: Ֆիլմարտադրողների համահայկական ֆեդերացիան՝ որպես նախաձեռնություն, հիմնադրվել է 2017թ.-ին՝ «Շարժապատկերային արվեստների կրթական եւ արդունաբերական կենտրոն»-ի (CINEMA) հենքի վրա, իմ կողմից: Նախաձեռնությունը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել հայկական կինոյի մտահոգիչ խնդիրները, հրապարակավ հանդես է եկել կինոյի պետական կառավարման քննադատի եւ ընդդիմախոսի դիրքերից:

Ինքնին հասկանալի է, որ Հայաստանում դժվար է քննադատել կինոյի պետական կառավարման մոդելը ու չունենալ խնդիրներ: Ֆեդերացիայում միավորված են պրոֆեսիոնալներ, որոնք վերջին վեց տարում զրկված են եղել կինոյի պետական կառույցի աջակցությունից: Դա մեզ միայն ամրացրել է, ֆեդերացիայի ներսում ձեւավորել է նպատակներին հասնելու հաստատակամության, միմյանց հանդեպ հարգանքի եւ մասնագիտական փոխօգնության բացառիկ միջավայր: 2024թ.-ի հունվարին նախաձեռնության 15-րդ հավաքի կողմից կայացվեց որոշում, ու մենք գրանցվեցինք որպես հասարակական կազմակերպություն: Ասուլիսը մեզ անհրաժեշտ է հասարակությանը ներկայանալու համար՝ ով ենք, ինչ ենք արել կինոյում, ինչ նպատակներ ունենք, ինչպես ենք տեսնում հայ կինոարտադրության այս աղետալի շրջափուլից ելքի ուղիները»,- ասաց Գալստյանը:

Ռեժիսորը նշեց, որ ասուլիսի ժամանակ խոսելու են նաեւ աշխարհի խոշորագույն կինոշուկաներից մեկում՝ Եվրոպական կինոշուկայում վերջերս իրենց գրանցած արդյունքների, 2024-ին խոշոր ինդուստրիալ մյուս միջոցառումներին մասնակցելու իրենց ծրագրերի մասին ու այն մասին, թե ինչ են ակնկալում այդ միջոցառումներից իրենք իրենց կառույցի անդամների, հայ կինոգործիչների ու հայկական կինոյի համար:

Կինոռեժիսորի խոսքով՝ կա պետական ֆինանսավորում ստացած 68 լիամետրաժ կինոնախագիծ, որոնց մեծ մասը երբեք չի ավարտվելու, եւ սա պետական ֆինանսների փոշիացում է, այսինքն՝ քրեական հանցագործություն:

«2023թ.-ին մենք դիմել էինք ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, որպեսզի մեզ տրամադրեն վերջին վեց տարիների պետական աջակցությամբ ֆիլմերի ստեղծման վիճակագրությունը: Ֆիլմեր ֆինանսավորող կառույցը՝ «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ը, երկար համառում էր, սակայն մենք հղում արեցինք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին ու ի վերջո ստացանք նյութերը՝ բավական խառը, անկազմակերպ, կարելի է ասել՝ փնթի կազմած»,- ասաց Գալստյանը:

Ռեժիսորը նշում է, որ իրենցից 2 ամիս է պահանջվել այդ վիճակագրությունը հասանելի դարձնելու համար, եւ ասուլիսի մի հատվածը նվիրել են դրա լուսաբանմանը:

«Ինչպե՞ս է «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ը վարվել հանրության գումարների հետ: Որքա՞ն ֆիլմ են ֆինանսավորել, եւ ո՞ր փուլում են դրանք, քանի՞ անգամ է մրցույթներում հաղթել նույն արտադրողը, քանի՞ անգամ է պետական աջակցություն ստացել կինոկենտրոնի տնօրենի պաշտոնակատարի ուսանողական ընկերուհին. Վեց տարվա ընթացքում կուտակվել է մոտ յոթ տասնյակ անավարտ կինոնախագիծ: Դրանց ճնշող մեծամասնությունը որեւէ շանս չունի երբեւէ ֆիլմի վերածվելու, որովհետեւ ավարտվել է դեռ չծնված՝ զարգացման փուլում: Կինոյին տրվող պետական աջակցության ավելի գռեհիկ փոշիացում անհնար է պատկերացնել»,- ասաց ռեժիսորը:

Անդրադառնալով հարցին՝ արդյոք շարունակվելու են մամուլի ասուլիսները, քանի որ սա իրենց առաջին ասուլիսն է, Գալստյանն ասաց. «Մենք չափազանց կարեւորում ենք լրատվության դերը կինոյի քարացած համակարգը բարեփոխելու ու կինոարտադրությունը մեռյալ կետից շարժելու մեր ծրագրերում:

Մենք լրագրողների հետ մշտական կապի մեջ ենք լինելու, որովհետեւ պետական կառավարման՝ տասնամյակներով քարացած, վատ բյուրոկրատական համակարգը առանց հասարակական ճնշման անհնար է փոխել: Սակայն, մեր ասուլիսների կառուցվածքը չի սահմանափակվելու առկա խնդիրների, կինոյի տագնապալի վիճակագրության հրապարակմամբ: Դրան զուգահեռ մենք հասարկությանը ներկայացնելու ենք մեր գործունեությունը, մեր կառույցի անդամների հաջողությունները:

Մենք կողք կողքի ենք դնելու պետական աջակցությամբ աշխատող կառույցի գործունեությունը եւ մեր՝ պետական աջակցությունից զրկված ու ֆինանսական հոսքեր չունեցող կառույցի անդամների գործունեությունը: Միայն մեր ակնհայտ ձեռբերումները կարող են պարտադրել ու պարտադրելու են պետական քաղաքականություն իրականացնողներին փոխել վերաբերմունքը կինոյի կառավարման հանդեպ ու հենվել պրոֆեսիոնալների, ոչ թե կառավարման ունակություններից զուրկ, գրագիտությունից բոբիկ կամակատարների վրա»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ԱՆԴԱՄ՝ ԳՈՐԾԿՈՄՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմը նոր անդամ ունի:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան հայտնում է, որ մարտի 11-ին կայացավ ֆեդերացիայի գործադիր կոմիտեի հերթական նիստը:

Համաձայն ՀՖՖ կանոնադրության հոդված 37-ի 5-րդ կետի (Եթե գործադիր կոմիտեի որեւէ պաշտոն կամ պաշտոնների մինչեւ 50% դառնում է թափուր, գործադիր կոմիտեն լրացնում է այդ պաշտոն(ներ)ը մինչեւ հաջորդ Ժողովը, որտեղ տվյալ պաշտոնում ընտրվում են փոխարինողներ՝ պաշտոնավարման մնացյալ ժամկետով)՝ ՀՖՖ գործադիր կոմիտեի անդամներին առաջարկվեց «Սարդարապատ» ֆուտբոլային ակումբի գլխավոր տնօրեն Անուշ Անանյանի թեկնածությունը:

ՀՖՖ գործադիր կոմիտեի անդամները, ծանոթանալով Անուշ Անանյանի գործունեությանը, քվեարկեցին նրա թեկնածության օգտին: Այսպիսով, Անուշ Անանյանը համալրեց ՀՖՖ գործադիր կոմիտեի շարքերը մինչեւ 2024 թ. դեկտեմբերին կայանալիք ՀՖՖ հերթական ժողովը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գործադիր կոմիտեի հերթական նիստում քննարկվել է Հայաստանի պրեմիեր լիգայում եւ Հայաստանի առաջին խմբում ՀՀ-ում մարզված կամ Հայաստանի ազգային եւ տարբեր տարիքային հավաքականներում հանդես գալու իրավունք ունեցող ֆուտբոլիստների սահմանաչափի հնարավոր փոփոխությունների հարցը:

Այս մասին գրում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: Ինչպես Հայաստանի պրեմիեր լիգայի, այնպես էլ Հայաստանի առաջին խմբի ակումբները ներկայացրել էին իրենց առաջարկները, որոնք քննարկվեցին ՀՖՖ գործադիր կոմիտեի անդամների կողմից: Քննարկումներից հետո որոշվել է, 2024-2025 մրցաշրջանից սկսած, Հայաստանի առաջին խմբում ՀՀ-ում մարզված կամ Հայաստանի ազգային եւ տարբեր տարիքային հավաքականներում հանդես գալու իրավունք ունեցող ֆուտբոլիստների քանակը հանդիպման հայտացուցակում թողնել 15, իսկ հիմնական կազմում 6-ից դարձնել 7:

Որոշվել է, 2025-2026 մրցաշրջանից սկսած, Հայաստանի պրեմիեր լիգայում ՀՀ-ում մարզված կամ Հայաստանի ազգային եւ տարբեր տարիքային հավաքականներում հանդես գալու իրավունք ունեցող ֆուտբոլիստների քանակը հանդիպման հայտացուցակում թողնել 9, իսկ հիմնական կազմում 3-ից դարձնել 4:

Որոշվել է նաեւ Հայաստանի պրեմիեր լիգայի՝ 2024-2025 մրցաշրջանում ՀՀ-ում մարզված կամ Հայաստանի ազգային եւ տարբեր տարիքային հավաքականներում հանդես գալու իրավունք ունեցող ֆուտբոլիստների անդամների քանակի վերաբերյալ անցկացնել լրացուցիչ քննարկում Հայաստանի պրեմիեր լիգայի ներկայացուցիչների մասնակցությամբ եւ որոշումը կայացնել այդ քննարկման արդյունքում:

ՎԱՆԴԱԼԻԶՄ

ՈՉՆՉԱՑՆՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ

Ստեփանակերտում հերթական վանդալիզմի դեպքն է արձանագրվել:

Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է Հայքի մշակութային օմբուդսմեն, ադրբեջանագետ Հովիկ Ավանեսովը:

«Ստեփանակերտի Վերածննդի հրապարակի հարակից տարածքում ադրբեջանցի վանդալները քանդել են ավանդական հայ տատիկի կերպարը ներկայացնող արձանը: Այս քաղաքականությամբ Ադրբեջանը ոչնչացնում է Ստեփանակերտի հայկական դիմագիծը:

Ադրբեջանի պետական վարչակարգի այս քաղաքականությունը եւս մեկ անգամ ապացուցում է, որ Արցախում գտնվող հուշարձանները գտնվում են վտանգի տակ»,- գրել է նա:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Անահիտ Գատեւչյանս (Գրիգորյան), կորցրել եմ ԵՊՀ թիվ 015594 դիպլոմս (տրված 1984 թվականին) Կենտրոն վարչական շրջանում: Գտնողին խնդրում եմ զանգահարել 096 55 01 514 հեռախոսահամարով:

●Մարտի 16-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Ռապունցելը» մանկապատանեական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ սկզբունքով է վճարվում նպաստի պակաս մասը:

Ռիտա Մինասյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սխալ հաշվարկելու հետեւանքով պակաս վճարված նպաստի գումարի վճարումը կատարվում է առանց ժամկետի սահմանափակման: Ընդ որում՝ վարձու աշխատողներին պակաս վճարված նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից սխալը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Վարձու աշխատողի մայրության նպաստը վերահաշվարկվում է նաեւ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում իր եկամտի վերաբերյալ վարձու աշխատողի կողմից գործատուին (նպաստը հաշվարկող եւ վճարող) լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում: Այս դեպքում մայրության նպաստը վճարվում է սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:

Ավել վճարված նպաստի գումարի հետպահումները կատարվում են գործատուի կամ լիազոր մարմնի որոշմամբ, եթե նպաստը նշանակվել եւ վճարվել է հաշվարկային մեխանիկական սխալների կամ նպաստը ստացողի կողմից սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հետեւանքով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավել վճարված գումարը հետ է պահվում ամբողջությամբ: Հետպահումը կատարվում է նպաստի հաջորդ վճարումներից կամ աշխատավարձից, ընդ որում՝ հետ պահվող գումարի չափը յուրաքանչյուր անգամ չի կարող գերազանցել վճարվող նպաստի կամ աշխատավարձի 20 տոկոսը:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է Վճռաբեկ դատարանի իրավասությունը:

Գեղամ Գալստյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Վճռաբեկ դատարանը վերանայում է Վերաքննիչ դատարանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը: Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը,

2) վերացնում է մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտումները:

Օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավընկալման հետեւանքով:

ՀՀ ընդհանուր իրավասության դատարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու նպատակով Վճռաբեկ դատարանը վերանայում է այն դատական ակտերը, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ռեժիսորներ Բեն Պրուդֆութի եւ Քրիս Բաուերսի «Վերանորոգման վերջին խանութը» (The Last Repair Shop) ֆիլմը հաղթել է հեղինակավոր «Օսկար» մրցանակաբաշխության «Լավագույն կարճամետրաժ վավերագրական ֆիլմ» անվանակարգում: Ֆիլմի հերոսներից մեկը՝ արհեստանոցի ղեկավար Սթիվ Բաղմանյանը, որը սկսել է դաշնամուրներ վերանորոգելով, պատմել է Բաքվում հայերի ջարդերից առաջ խորհրդային Ադրբեջանից փախչելու մասին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 4 - 7 + 4 + 9
Կոտայքի լեռներ	- 8 - 12 + 5 + 8
Կոտայքի նախալեռներ	- 5 - 8 +10 + 13
Գեղարքունիք	- 8 - 13 + 3 + 6
Լոռի	- 6 - 10 + 8 + 10
Տավուշ	- 4 - 7 + 8 + 11
Արագածոտնի լեռներ	- 8 - 12 + 3 + 6
Արագածոտնի նախալեռներ	- 5 - 7 + 8 + 11

Արարատ	- 4 - 7 +11 + 13
Արմավիր	- 4 - 8 +10 + 13
Վայոց ձորի լեռներ	- 3 - 7 + 3 + 6
Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 7 +10 + 12
Սյունիքի հովիտներ	- 4 - 7 +11 + 14
Սյունիքի նախալեռներ	- 9 - 13 + 7 + 10
ԼՂՀ	- 9 - 10 + 7 + 9
Երեւան	2 - 4 + 9 + 11

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*